ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2020-2022թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հունվար-նոյեմբեր)





2022թ. հունվար-նոյեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 1 տրիլիոն 960.5 մլրդ դրամ, ինչը 1 տրիլիոն 4.3 մլրդ դրամով կամ 105%-ով ավել է 2021թ. և 1 տրիլիեն 161.5 մլրդ դրամով կամ 145.4%-ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հոկտեմբերի ցուցանիշից մեծ է 205.6 մլրդ դրամով կամ 11.7%-ով: 2022թ. հունվար-նոյեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 989.8 մլրդ դրամ, ինչը 439 մլրդ դրամով կամ 79.7%-ով ավել է 2021թ. և 437.4 մլրդ դրամով կամ 79.2%-ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հոկտեմբերի ցուցանիշից ավել է 116.5 մլրդ դրամով կամ 13.3%-ով: 2022թ. հունվար-նոյեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 970.7 մլրդ դրամ, ինչը 563.3 մլրդ դրամով կամ 139.4%-ով ավել է 2021թ. և 724.1 մլրդ դրամով կամ 293.6%-ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հոկտեմբերի ցուցանիշից ավել է 89.1 մլրդ դրամով կամ 10.1%-ով:

2022թ. հունվար-նոյեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 4 մլրդ 599.5 մլն դոլար, ինչը 2 մլրդ 701 մլն դոլարով կամ 142.3%-ով ավել է 2021թ. և 2 մլրդ 956.9 մլն դոլարով կամ 180%-ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հոկտեմբերի ցուցանիշից ավել է 519.9 մլն դոլարով կամ 12.7%-ով: 2022թ. հունվար-նոյեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 2 մլրդ 317.7 մլն դոլար, ինչը 1 մլրդ 225.2 մլն դոլարով կամ 112.1%-ով ավել է 2021թ. և 1 մլրդ 183.8 մլն դոլարով կամ 104.4%- ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հոկտեմբերի ցուցանիշից ավել է 294.5 մլն դոլարով կամ 14.6%-ով: 2022թ. հունվար-նոյեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 2 մլրդ 281.8 մլն դոլար, ինչը 1 մլրդ 475.8 մլն դոլարով կամ 183.1%-ով ավել է 2021թ. և 1 մլրդ 773.1 մլն դոլարով կամ 348.6%-ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հոկտեմբերի ցուցանիշից ավել է 225.4 մլն դոլարով կամ 11%-ով:

*** Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի արտաքին հատվածի վիճակագրության հրապարակումները՝ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ**